Ծ Ր Ա Գ Ի Ր

«Դիլիջանի համայնքային կենտրոն» Հասարակական Կազմակերպություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 5 - ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2020

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամի ծրագիր հանդիսացող «Դիլիջանի համայնքային կենտրոնը» (այսուհետ - «ԴՀԿ») ստեղծվել է Դիլիջանի երիտասարդական կենտրոնի հիման վրա, որը հիմնադրվել է 2014թ.-ին: Կենտրոնի նպատակներից էր ծառայել որպես հարթակ՝ միավորելու միջազգային դպրոցի ուսանողներին և Դիլիջան քաղաքի երիտասարդությանը: Հետագայում այն վերածվել է համայնքային կենտրոնի, որտեղ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, դասընթացներ, վերապատրաստումներ, միջոցառումներ համայնքի կողմից՝ համայնքի համար: Դիլիջանի համայնքային կենտրոնն առանցքային դեր է խաղում քաղաքում կրթական, մշակութային և սոցիալական նախագծերի իրականացման գործում: Կենտրոնի բացման օրվանից ավելի քան 12.500 տեղացիներ մասնակցել են համայնքային կենտրոնի միջոցառումներին ու դասընթացներին, իսկ 75 տեղացի պատանիներ ընդունվել են աշխարհի տարբեր միջազգային դպրոցներ, կամ մասնակցել են միջազգային կրթական ծրագրերի (այդ թվում 12 պատանիներ կրթություն են ստացել Աշխարհի միացյալ քոլեջների ցանցում):

2020թ-ին «ԴՀԿ» ծրագիրը գրանցվել է որպես հասարակական կազմակերպություն, որն ունի հետևյալ տեսլականը՝

Դիլիջանի բնակիչներն ունեն բարձր կենսամակարդակ, կարողանում են հասնել իրենց տնտեսական, սոցիալական և կրթական նպատակներին, հանդիսանում են հզոր և հոգատար համայնքի բաղկացուցիչ մաս:

կազմակերպությունը ստեղծվել է Հիմնադիրների 11.06.2020 թվականի որոշմամբ:

Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է՝ **211.171.1132858**:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության նպատակներն են (ըստ կազմակերպության կանոնադրության)՝

Ձևավորել գիտելիքահեն, ներառական և մասնակցային համայնք, որը կօգնի բարձրացնել բնակիչների կենսամակարդակը և զարգացնել համայնքները:

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության խնդիրներն են (ըստ կազմակերպության կանոնադրության)՝

1. Աջակցել և խրախուսել ուսուցման (կրթության) և գիտության բարեգործության, մարդասիրության, սոցիալական, համայնքների զարգացման, մշակույթի, արվեստների և արհեստների, սպորտի ոլորտների զարգացումը
2. Խրախուսել և աջակցել անձանց ինքնազարգացմանը, հմտությունների, կամավորական գործի զարգացմանը ՀՀ-ում
3. Խրախուսել ցկյանս ուսուցումը
4. Սատարել միջազգային կապերի ստեղծմանը և զարգացմանը

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հասարակական կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով, «Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Արմինե Հովհաննիսյան Ռազմիկի, նախագահ
2. Թագուհի Խառատյան Գրիգորի, ծրագրերի ղեկավար
3. Լուսինե Չիչակյան Գուրգենի, ադմինիստրատիվ աշխատակից
4. Անուշ Ոսկանյան Ռուրիկի, մաքրուհի
5. Օլգա Տեուտու Գրիգորիի, մաքրուհի
6. Երվանդ Տիտանյան Հայկի, տեխնիկական աշխատակից
7. Վահան Բաղալյան Էդուարդի, թատերական խմբակի ղեկավար
8. Նարեկ Մինասյան Արմենի թատերական խմբակի ղեկավարի օգնական
9. Լուսինե Գալստյան Հրաչիայի, երգչախմբի խմբավար
10. Մարգարիտ Ոսկանյան Աշոտի, դաշնակահար
11. Արթուր Գրիգորյան Ռաֆայելի, պարային խմբակի գեղ. ղեկավար/պարուսույց
12. Անի Ամիրխանյան Գևորգի, պարուսույց
13. Նունե Զաքարյան Սերգեյի, ռուսաց լեզվի խմբակի ղեկավար
14. Վարսիկ Ներկարարյան Վարդգեսի, անգլերեն լեզվի խմբակի ղեկավար
15. Ստելլա Մկրտչյան Անդրանիկի, լուսանկարիչ
16. Արտակ Գևորգյան Գրիշայի, զարդագործության դասընթացավար
17. Արմինե Գիշյան Սամվելի, զարդագործության դասընթացավար
18. Սաթենիկ Սարիբեկյան Տիգրանի, կարի և ձևի դասընթացավար
19. Սևակ Սաղաթելյան Շոպենի, փայտագործության դասընթացավար
20. Հասմիկ Սողոմոնյան Արթուրի – թղթի վերամշակման դասընթացվար
21. Մարիետա Գաբրիելյան Հուսիկի – կար ու ձևի դասընթացավար
22. Նազիկ Պարանյան Ֆրունզեի - նկարչության դասընթացվար
23. Անահիտ Հակոբյան Սամվելի – կար ու ձևի դասընթացվար
24. Արմեն Մանվելյան Վոլոդյայի – կենտրոնի պահպանման աշխատանքների համակարգող
25. Գայանե Խաչատրյան Հրաչիայի – ադմինիստրատիվ աշխատակից

Ծրագրի շահառուներն են Դիլիջան համայնքի և հարակից շրջանների բնակիչները՝ առանց տարիքային սահմանափակման:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝

1. Կրթություն / շարունակական ուսուցում
2. Համայնքային հզորացում
3. Մշակույթ
4. Սպորտ

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է Դիլիջան համայնքի բնակիչների շրջանում գիտելիքների և հմտությունների զարգացումը, գիտելիքահեն, ներառական մասնակցային համայնք ձևավորելը, որը կօգնի բարձրացնել բնակիչների կենսամակարդակը և զարգացնել համայնքները:

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

1. «Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության հիմնադիր «Զբոսաշրջության և քաղաքաշինության» Բարեգործական Հիմնադրամի կողմից իրականացրած «Դիլիջանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն» երկամյա ծրագիրը,

2. «Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության հիմնադիր «Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագիրը:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 (հինգ) տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. «Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամ

2. «Զբոսաշրջության և քաղաքաշինության» Բարեգործական Հիմնադրամ

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 5 տարվա ընթացքում:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարիներին «Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Մշակութային ծրագրեր

1. Թատերական խմբակ
2. Երգչախումբ
3. Պարի խմբակ
4. Նկարչություն
5. Դիլիջանի արխիվի ծրագիր

Համայնքային հզորացման ծրագրեր / Կամավորական ծրագրեր

1. Դիլիջան քաղաքի զարգացման ծրագիր
2. Օտար լեզուների խմբակներ (անգլերեն, ռուսերեն, իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն, չինարեն և այլ)
3. Դիլիջանի միջազգային դպրոցի (UWCD) հետ համատեղ համայնքային ծրագրեր CAS (Creativity, Activity, Service) ծրագրի շրջանակներում
4. Լողի դասընթացներ
5. Բասկետբոլի դասընթացներ
6. Ֆուտբոլի դասընթացներ
7. Այլ ժամանցային կրթական ծրագրեր

Արհեստագործական դասընթացներ

1. Կավագործություն
2. Ասեղնագործություն
3. Փայտագործություն
4. Զարդագործություն
5. Կար ու ձև
6. Թղթի վերամշակում
7. Հուշանվերների պատրաստում
8. Արհեստագործական այլ դասընթացներ

Համայնքային միջոցառումներ

1. Ձմեռային տոնավաճառ
2. "Diamond Challenge" երիտասարդների ձեռնարկատիրական միջազգային մրցույթ
3. Փառատոն՝ նվիրված Սուրբ զատկի տոնին
4. Երեխաների պաշտպանության միջազգային օր
5. Համայնքային այլ միջոցառումներ

Տեղեկատվական հանդիպումներ

Կարողությունների զարգացման դասընթացներ

Ի լրումն նշված ծրագրերի նախատեսվում է նաև մշակել նոր ծրագրեր՝ ելնելով համայնքի տվյալ ժամանակահատվածի կարիքներից:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սոնյն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ

«Դիլիջանի համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը կապահովի տարեկան

- 24 համայնքային ծրագիր՝ բոլոր տարիքային խմբերի համար – 300 մասնակից
- 12 անձնական զարգացման ծրագիր՝ բոլոր տարիքային խմբերի համար – 150 մասնակից
- 4 վերապատրաստման ծրագրեր `ուղղված մասնագիտական զարգացմանը – 60 մասնակից
- 4 մեծ և 6 փոքր կամավորական ծրագրեր – 150 մասնակից
- 20 ծրագիր համայնքի 500 բնակչի ներգրավվածությամբ՝ Դիլիջանի միջազգային դպրոցի ծրագրերի շրջանակներում (CAS)
- 24 ներկայացումներ, համերգներ, մշակութային միջոցառումներ, տոնավաճառներ, փառատոներ-2400 մասնակից
- Համայնքի ներկայացուցիչների 30% ներգրավվածություն Կենտրոնի ծրագրերում
- 2 փոքր բիզնեսի ստեղծում

«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ նախագահ՝ Ա. Փիլիաննիսյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
DILIJAN COMMUNITY CENTER PUBLIC ORGANIZATION
հասարակական կազմակերպություն
public organization
07623365